

Լեռնիա, Նիւ ձոսի, 10 Օգոստ. 1960

Սիրելի Գերազանդաւ Արքայապետ,

Բազմալիցի Մարտ-Ապրիլ կրկնակ թիւը ընդունեցի այսօր եւ տեղեկացայ ծոցը զբուսած յայտարարութեան մը թէ Ձեր նուիրեալ Արքայապետութեան քսանեւէնդամեակը պիտի կատարուի Սուրբ Ղազարու մէջ:

Այս ուրախութիւնը դէպքին առթիւ ես ալ կը փութամ՝ որպէս խոնարհ ոմն՝ Ձեզի մատուցանելու այս տողերովը՝ իմ սրտադին շնորհաւորութիւնները եւ մաղթանքները որ Աստուած Ամենակալ Ձեր թանկագին կեանքը երկարէ որ դեռ ուրիշ քսանեւէնդամեակ մը բոլորէք որպէս Արքայապետ Մխիթարեան Վանուց եւ Ուխտին, եւ ընէ Ձեզ իր աստուածային օրհնութեանց սփռիչ մէկ աջը:

Մեր ազգային նուիրական հաստատութեանց մէջ չկայ ուրիշ հաստատութիւն մըն ալ, բացառելով Հայաստանեայց Ս. Եկեղեցին, որ աւելի զօրեղ կոչում ըրած է միշտ, եւ կը շարունակէ ընել, սրտիս, քան Մխիթարեան Ուխտը կամ Միարանութիւնը եւ անոր մատուցած եղական եւ դրական ծառայութիւնները մեր ազգին, զլիաւորարար մատենադրութեան եւ դաստիարակութեան մարդերուն մէջ: Անայլայլ սիրով սիրած եմ Մխիթարեան Հաստատութիւնը, հիացած եմ անոր անբաղդատելի դործերուն վրայ, եւ կը շարունակեմ սիրել ու հիանալ: Աստուածային պարզեւ մըն էր Մխիթար Արքայ մեր ազգին համար, ճիշտ ինչպէս էին Սուրբ Սահակ եւ Մեսրոպ, ոչ նուազ:

Կը խնդրեմ որ շնորհք ընէք ընդունելու իմ ալ լուծաս Մխիթար Արքայօր Յուշարձանին շինութեան համար զոր կը ներփակեմ:

Սիրոյ ջերմ ողջունիւ եւ մաղթանաց աղօթիւք,

Մնամ Ձերդ խոնարհարար
Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ

Մարտիլիա, 17 Օգոստոս 1960

Արհիպատիւ Գերազանդաւ Տէր

Հ. Սրապիոն Արքեպիսկոպոս Ուլուհոնեան

Ընդհ. Արքայապետ Մխիթարեան Միարանութեան

Վենետիկ - Ս. Ղազար

Անսահման ուրախութեամբ եւ հրճուանքով այսօրուան «Յառաջ»-ին (17 Օգոստոս 1960 - Փարիզ) տեղեկացայ թէ Նորին Սրբութիւնը Յովհաննէս ԻԳ Ս. Քահանայապետը Արքեպիսկոպոսութեան աստիճանին բարձրացուցած է Մխիթարեան Միարանութեան Մայրամիջին բազմադրին Արքայապետը:

Այս առթիւ կը յայտնենք, Տիկինն եւ ես, Արհիպատիւ Տէրութեանդ՝ մեր ջերմադին եւ անկեղծ շնորհաւորութիւնները, ու կը մաղթենք Ձեզի տակաւին երկար ու շատ երկար տարիներ առողջ ու հանգիստ՝ յոգևտ եւ ի պարծանս Մխիթարեան Միարանութեան եւ տառապեալ Հայ ազգին:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյդ եւ խնդրելով Ձեր հայրական օրհնութիւնը, կը մնանք

Արհի. Հօրդ .

Խ. Տ. եւ Խ. Ա.

Տէր եւ Տիկին ՊԵՏՐՈՍ ԶԱՄԱՐԵԱՆ

ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ, ԲԱԺԱԿԱՃԱՌԵՐ ԵՒ ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ

